


ՏՄՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում դրվում են միայն լիպագրատան մէջ:

Մեր հասցեն, Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak»:

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունւում է ամեն շաբաթով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ
Վեհապետ Կաթողիկոսի թաղմանը.— Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թէյի առևտուրը Կովկասում. Նիկո-
լայ Շելդուհով. Նամակ խմբագրին. Նամակ խմբ-
ագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խաղաղական նոր միջնա-
րութիւնը. Մայիսի մէկը Եւրոպայում. Արտաքին
լուրեր.— ԽԱՌՆ. ԼՈՒԲԵՐ.— ՀԵՌԱՎՈՐՆԵՐ.— ԲՈՒ-
ՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՎԵՀԱՔԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Մշակի՝ Կողմից, վեհապետ Կաթողիկոսի
թաղմանը ներկայ գտնվելու և թաղման
հանդէսը նկարագրելու համար Կէմպիսին
ուղարկած մեր սեփական թղթակցից բա-
տասցանք հետևեալ հետազոտելը:

Ներքին, 21-ին ապրիլի, երեկոյան 4 ժա-
մին հանդուգնեալ Կաթողիկոսի մարմինը
հանդիսաւոր կերպով տեղափոխվեց մայր-
կեկեղեցի: Այսօր, երեկոյան ժամը, ապրիլի
22-ին ժամը 2 1/2-ին ամբողջ հոգեւորական-
ութեան, մեր կառավարութեան ներկայա-
ցուցիչ, պ. Ամբարջանովի, պարսից փոխ-հիւ-
րութեան, երեւանի նահանգապետ գեներալ
Յրէզէի, քաղաքացիական և զինուորական
իշխանութիւններէ, Ուսումնասիր, Թիւր-
քայի և Պարսկաստանի բազմաթիւ քա-
ղաքներէ, զարդաներէ, ընկերութիւններէ և
հաստատութիւններէ պատգամաւորներէ և
ազգային բազմութեան ներկայութեամբ
տեղի ունեցաւ նորին օծութեան թաղման
հանդէսը: Դաշաղի մօտ դամբանական ձա-
ռախտութիւն արեց սրբազան Արիստակէս
եպիսկոպոս Կաթողիկոս, իսկ յուղարկուե-
լուցեան հանդիսից յետոյ տուած ճաշիկ-
այովին, հանդուգնեալ հոգեւորական
թաղի ժամանակ, սրբազան Արիստակէս
եպիսկոպոս Սեդրակեան մի աչքու և հա-
մակարան ատենաբանութիւն արեց, որը
խոր տպաւորութիւն դրոշեց ունկնդիրներէ
վրա: Բազմաթիւ պատմական զրոյցեան հան-
դուցեալի դաշաղի վրա: Կաթողիկոսական
տեղակալ նշանակված է սրբազան երեւան
արքեպիսկոպոսը:

Մի քանի ժամից յետոյ, մեր թղթակցին
ուղարկեց մեզ և հետեւեալ չորացուցիչ
հետազոտելը:

Կաթողիկոսի թաղման հանդէսին ներ-
կայացուցիչներ ունեին հետեւեալ քաղաք-
ները: Բազու, Շուշի, Հին-Նախիջևան, Ե-
րևան, և Ալեքսանդրօպոլ: Ունեին իրանց
խորհրդացուցիչները և Պոլսի հայոց պատրի-
արքան: Թիֆլիսի Ներսիսեան դպրանոցը,
Շուշու և Երևանի թեմական դպրանոցները,
Թիֆլիսի Կանանց Բարեգործական ընկերու-
թիւնը, Թիֆլիսի Գայանեան և Անանեան
կախան դպրոցները, Ախալքալաքի դպրոցը,
Թիֆլիսի առևտրական դասակարգը և մե-
ղաների ուղարկման: Նամանակեալ կային եր-
կու ներկայացուցիչներ Թիֆլիսի երիտա-
ւարութեան մի խմբի կողմից: Հանգու-
ցեալ Կաթողիկոսի դաշաղի վրա դրված
պատմներ թիւը 15 էր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թէթի ԱՌԵՏՈՐԸ ԿՈՎԿԱՍՈՍԻ

Մարտի 10 կամ 15 տարի առաջ թէյի առե-
տուրը Կովկասի երկրներում գտնւում էր տեղա-
թի վաճառականների ձեռքում: Թէյի առևտրի
կենտրոնը գլխաւորապէս Թիֆլիսն էր, ուր տե-
ղական վաճառականների ձեռքով Անգլիայից
կամ ուրիշ երկրներից ուղղակի թէյ էր ստա-
ցւում:

Այսօր աւելի քան տասն տարի է, որ թէյի առե-
տուրը մեր վաճառականների ձեռքից լողել է և
անցել է օտարերկրացի վաճառականների ձեռքը:

Ինչ խառնութիւն որ այցելէր, կը տեսնէր որ, ա-
ռանց բացառութեան, թէյը վաճառւում է օտար
Ֆիրմաների ծրարներում: Պակաս չէն նպաստում
թէյաւաճառ օտար Ֆիրմաների զարգանալուն
նոյն իսկ մեր երկրի վաճառականները, այնպէս
որ մեր բոլոր թէյ ծախողները դարձն են ան-
վարձ մշակներ զանազան Պօպօվների, Վազառն-
ների, Պերելուների, Բարինովիների և ուրիշների
համար: Մեր թէյ ծախողները գտնւում են վերայի-
շեալ Ֆիրմաներից, յայտնի գիշերով, 10, 12
կամ 15% կանխիկ դրամ վճարելով բերում են
իրանց խառնութիւնը: Եւ ապա իրանցից զնոյն-
երէն էլ տալիս են նոյն գեղջը՝ ինչ որ իրանք
ստացել են, մինչև անգամ մէկ ֆունտ առնողին
էլ, ի նկատի ունենալով այդ Ֆիրմաներից մի
քանիսի այն պայմանը, թէ՛ Եւրոպայի վաճառի 10
հազար ռուբլու չափ, դարձեալ կը ստանայ այդ
գումարի վրա 200 ռուբլի: Այդ դեռ բաւական
չէ: Այդ տեսակ պայման ունեցողներն էլ միմեանց
հետ մրցելու համար, իրանց այդ ապագայ 200
ռուբլի դուր օգուտիցն էլ իրանցից գնողին տալիս
են կրկին 1 1/2%, այնպէս որ 10 հազար ռուբլու
չըջաղեցութեան գումարից մնում է իրանց միայն
50 ռուբլի: Եւ այդ չնչին օգուտի մէջ մըտ-
նում են մեր թէյ վաճառողի ժամանակի կո-
րուածը, խառնութի ծախսերը և ապագայի վնաս-
ները: Ուրեմն, եթէ մանրամասն հաշուէր, կերե-
ւալ, որ ոչ թէ մի առանձին օգուտ չը կայ, այլ
համարեա թէ վնաս: Եւ այդ էլ, ի հարկէ, այն
պատճառով, որ մեր վաճառականները թէյի առե-
տուրը այդպիսի խախտում հիմքերի վրա են դը-
րել:

Այդ, ինքն ըստ ինքեան հարց է առաջ դառնա-
լինչ պիտի անել, կամ ինչ ձևով դրոշել, որ դո-
րծերի դրութիւնը բարւոյն է և մեր վաճառական-
ները կարողանան թէ՛ իրանց օգուտ բերն և թէ՛
մեր երկրի առևտրի և արդիւնաբերութեան զար-
գացման: Եթէ մտնենք մի քանի մանրամասնու-
թիւնների մէջ, կը տեսնենք, որ այն թէյը, որ
օտար Ֆիրմաները մեզ վրա ծախում են ֆունտը
1 ռ. 60 կոպ., 2 ռ. 20 կոպ., և աւելի գնորդի
չափ թէյ արժէ Չինաստանում. բերնին էլ շատ
բիւջ էրէ: Եւ պահանջում, մարմն էլ մեծ չէ, այն-
պէս որ եթէ մեր վաճառականները իրանք այդ
գործի դուռն կանգնեն, և ոչ թէ չնչին տոկոս-
ներին համար ուրիշ Ֆիրմաներից բերն, այն
ժամանակ իրանք դրամական մեծ չափ կունենան,
փոխանակ այդ չափն ուրիշ Ֆիրմաներին տալու:
Նպատակին հասնելու միջոցներից մէկը, ի միջի
այլոց, այն է, որ մեր վաճառականները մի
քանիսը միանան և կազմեն թէյի առևտուրի
ընկերութիւն: Այդ ընկերութիւնը թող ունե-
նայ մի, ընդհանուր պահեստ, կամ ուրիշ խաղաղ-
ընդհանուր թէյի գ օր ծ ա ղ ա ն, որտեղից խաղաղա-
նայ թէյը թէյի առևտրական կը ստանայ այնքան թէյ,
ինչքան որ նա կարող է ծախել: Հասկանալի է, որ,
ինչպէս ուրիշ ընկերութիւնների մէջ, այնպէս և
թէյի մի այդ տեսակ առևտրական ընկերութեան
մէջ ամեն մի անգամ կը ստանայ ընդհանուր օ-
գուտից համաձայն իր մտքած փողը քանակու-
թեան կամ ակցիաների:

Թէյի առևտրի ընկերութիւնը Կովկասում
անշուշտ պիտի ունենայ մի յայտնի ծրարը:
Այդ տեսակ ընկերութեանը կարող են միանալ
ցել 100 ռուբլուց մինչև 1000 ռ. ունեցողներն էլ:
Ընկերութիւնը կարող է ուղղակի ստանալ թէյ
Չինաստանից, աւելի յարմար պայմաններով:
Այդպիսի մի ընկերութիւն կազմուել համար շատ
մեծ զրամագումարների պէտք չը կայ: Առ այդ
դիմաւոր պէտք կայ մի ընկերութիւն, երբ միա-
նալու և այդպիսի մի ընկերութիւն կազմուելու
ցանկութիւն լինի, այն ժամանակ կարելի կը լի-
նի գտնել և հարկաւոր դրամագումարն էլ:
Ողբան մենք տեղեկացել ենք, այդ տեսակ մի
ընկերութիւն կազմուել համար արդեն Թիֆլիսի
առևտրականների մի շրջանում բաւական տրա-
մաղրութիւն կայ. նոյն իսկ ծրագրի մշակող-

ներ էլ կան: Ուրեմն եթէ գտնուում են համա-
րողներ, որ Կովկասում հիմալի թէյի առևտրի
ընկերութիւն, դժուար չի լինի նոյն իսկ շատ
չուտով գործը դուռն բերել: Այդպիսի ընկերու-
թեանը կարող են մասնակցել և Կովկասի ու-
րիշ քաղաքների առևտրականները:

Մնում է միայն, որ նախաձեռնողները գործի
դուռն անցնեն, պատրաստեն ինչ հարկաւոր է,
և խնդրել լաւ մշակելուց յետոյ, ծառայեցնեն
իրանց դրամագումարը մի այնպիսի գործի համար,
որ թէ իսկ չափ կը տայ, թէ անգական առևտու-
րին չափ կը բերի, և թէ հարկաւոր մարդկանց
համար աշխատանքի դուռ կը բանայ, ինչպէս
այդ լինում է, օրինակ, մեր ծխախոտի գործա-
նաներում:

ՆԻԿՈԼԱՅ ՇԵԼԴՈՒԿՈՎ

Ապրիլի 13-ին վախճանվեց Պետերբուրգում
ուսու յայտնի հրապարակագիրը Նիկոլայ Վախ-
ելովի Շելդուհով:

Շելդուհով ծնվել է Պետերբուրգում 1824 թին:
Անտառային բարձրագոյն դպրոցում իր ուսումը
աւարտելուց յետոյ, նա մտաւ պետական ծառա-
յութիւն, որտեղ, իր ընդունակութեան շնորհիւ,
սկսեց շատ արագ կերպով առաջ գնալ: Որպէս
մասնագէտ անտառագիտ, հանգուցեալը հրատա-
րակեց երկու նշանաւոր գրքեր. «Исторія рус-
скаго лѣсного законодательства» և ապա «Лѣс-
ная технология», որոնք իրանց երեւալով թէ՛ գի-
տութեան և թէ՛ կառավարութեան ուշադրութիւ-
նը գրաւեցին: Յիսուններորդ թեմականութեան Շել-
դուհով հրաւիրեց Վիսնիսկօէ՝ ամոված անտա-
ռագիտական դպրոցը, ուսուցչի պաշտօնում և
դրա համար ուղարկվեց կառավարութեան հաշ-
ւով արտասահման, անտառային գործը Եւրոպա-
յում ուսումնասիրելու համար: Վախճանեալով
թեմականների սկզբնութեամբ հանգուցեալը նորից
գնաց արտասահման, բայց այնտեղից Ռուսաս-
տան վերադառնալով հրաժարական տուեց պե-
տական ծառայութիւնից և նուրից իրան պար-
բերական մամուլի աշխատակցութեան: Դէպի
Սիբիր իր արած ճանապարհորդութիւնը առեց
նրան առատ նիւթ «Сибирь по большой доро-
гѣ» գիրքը գրելու համար: Ապա «Современник»
ամսագրում նա տպագրեց անտառական և հասա-
րակական յօդուածներ մի շարք, և նոյնպէս աշ-
խատեցում էր «Русское Слово» ամսագրին:
Երբ այդ վերջին ամսագիրը խափանվեց, Շելդու-
հով սկսեց եւանդալ իկրպով աշխատակցել
«Дѣло» ամսագրին, և Լօրիւ-Մէլիքովի միջնա-
րութեան օրով դարձաւ այդ ամսագրի խմբագիր,
նրա նախկին խմբագիր, Բլազուսկիովի մահից
յետոյ: Սակայն Պետերբուրգ թողնելուց յետոյ,
նա բաւական ժամանակ ապրեց դաւաններում
վերջապէս 1884 թին նորից մարաքաղաքնե-
րը վերադարձաւ՝ Շելդուհով դարձաւ «Русская
Мысль» ամսագրի մշակական աշխատակցի: Այդ
ամսագրում նա գրեց «Очерки русской жизни»
յօդուածների շարքը, որոնք իրանց աղաքամիտ
ուղղութեամբ, իրանց լուրջ հայեացքներով հայ-
րենիքի անտեսական-հասարակական խնդիրների
վրա՝ ամբողջ ուսուցչ ինտելիգենցիայի ուշադրու-
թիւնը գրաւեցին:

Անցեալ տարւոյ վերջում Պալիկովի հրատա-
րակելի լոյս ընծայեց Շելդուհովի բոլոր գրուած-
ները, երկու հաստ հատորների մէջ ամփոփված,
իսկ եօթանասներորդ թեմականութեամբ հրատա-
րակվեց առանձին գրքով հանգուցեալի «Податной
вопросъ» (Հարկատուութեան հարց) վերնագրով
գիրքը:

Հանգուցեալը վախճանվեց 66 տարեկան հա-
սակում, երկարատե հիւանդութիւնից յետոյ:

ՆԱՍԱԿ ԽՄԱՍԱՐԻՆ

Պետերբուրգ, 10 ապրիլի
Ապրիլի մէկին վերջապէս կայացաւ յօդու
Աղամանի (կօնցերտ) երեկոյթ: Յունվարից ա-
մենայն ներդրութիւններ կրելով աշխատում էինք
այդ գործի համար, և ապրիլ ամսին կարողացանք
միայն իրագործել մեր բարի նպատակը: Տիկին
Սալկինա, որի անձնուէր աշակցութեամբ այդ
երեկոյթը առաջ էր ընթանում, իրան կողմից ա-
մեն ջանք գործ դրեց երեկոյթը աշողնեցնելու:
Մեր երախտապարտ շնորհակալութիւնը յայտնում
ենք ուսու բեմի այդ դարդին, որի արտի մէջ
արձագանք է գտնում ամեն մի բարի ցանկու-
թիւն: Միզ համար մի չափազանց ուրախալի
երեկոյթ է, երբ տեղիս ուսու և ֆրանսիական
բեմի յայտնի դերասանները, ունենալով իրանց
գլուխ տ. Սալկինային, մեծ ցաւակցութեամբ
վերաբերվեցան դէպի հայ տաղանդաւոր արտիստը,
որը այժմ գտնվում է Կ. Պօլիս ուսու դեմական-
տան հիւանդանոցում: Այսպիսով ուրախալի ե-
րեկոյթ է օտար լրագրութեան համակարան յա-
րաբերութիւնը դէպի Աղամանը:

Հայերը, ի հարկէ, կարողացած կը լինեն «Новое
Время»-ի № 5418 դեմոկրատ տաք, եւանդալ
յօդուածը Աղամանի մասին: Աղամանի երեկոյթի
մասին լրագիրները քանի անգամ խօսեցին,
իշխեցնելով հասարակութեանը տաղանդաւոր, թէ-
պէս և հայ արտիստի ցաւալի դրութիւնը: «Но-
вое Время» և «Новости» լրագիրները իրանց
թերթերի առաջին երեսում ձրի տպագրեցին մե-
ծ յայտարարութիւններ Աղամանի երեկոյթին մա-
սին: Ռուս ինտելիգենտ, ազնիւ, ընտիր հասարա-
կութիւնը իրան ներկայութեամբ երեկոյթին
յարգեց Աղամանի պատիւը ինչպէս տաղան-
դաւոր արտիստի: Մեծ թւով օտարադէր երի-
տասարդներ, որոնք Աղամանին չէն էլ ճանա-
լուտ, առաջարկեցին իրանց ծառայութիւնը
այդ բարի նպատակի համար: Կրկնում են, օ-
տարադէր թէ արտիստների, թէ լրագրութեան,
թէ հասարակութեան ուշադրութիւնը դէպի այդ
երեկոյթը մի ուրախալի և միջոցաւ երեկոյթի
(Յաւում ենք, որ կօնցերտի օրը վախճանվեց Մեծ
Խիսանուէի Օղբա Ֆիօթօրօվա և Ժողովուրդը
կարծեց, թէ այդ օրը կօնցերտ չէ կարող կայա-
նալ. դրանով միայն պէտք է բացատրել, որ
եկամուտ երեկոյթից համեմատաբար քիչ ունե-
ցանք):

Եւ արդէն ձեռք հեռագրով յայտնած են, որ
եկամուտ երեկոյթից ունեցանք, դուրս դալով
ամեն ծախսերը, 150 ռուբլ., որը և Credit Lyonnais
միջոցով փոխարկեցին Կ. Պօլիս 1891 թ. ապրիլի
5-ին: Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւ-
նը առ. Սալկինային, Կարցովային, Տիմանովային,
պ.պ. Աուերին, Գիտրիին, Վարյամովին, Կարիա-
կինին, որոնք մասնակցեցին Աղամանի երեկոյ-
թին: Յայտնում ենք նոյնպէս մեր շնորհակալու-
թիւնը պ. Ֆ. Բերնշտեյնին, որը կենդանի պատ-
կենքով, Շելդուհովի շարադրութիւններից վերց-
րած, դարձարեց երեկոյթը: Մեր շնորհակալութիւ-
նը «Новое Время» և «Новости», լրագիրներին,
որոնք բարի եղան ձրի տպագրել յայտարարու-
թիւնները:

Գուցէ հայ ընկերացող հասարակութիւնը զարմա-
նայ մեր գիտակցաբար լուրեւան վրա տեղիս հայ
հասարակութեան վերաբերեալ Աղամանի երե-
կոյթին 40 չափ հայ հաղիւ լինէր, այն ինչ հայե-
րի թիւը Պետերբուրգում 500-ից աւելի է...
Աղամանին նիւթապէս և բարոյապէս օգնեց
տեղիս օտար հասարակութիւնը, որին և յայտ-
նում ենք մեր խոնարհ շնորհակալութիւնը: Թող-
նում ենք այն հարցը, թէ որքան անտանկի էր
մեզ համար այն դրութիւնը, երբ Սալկին, Գիտրի,
Աուեր և յայտնի լրագրի խմբագրատանից մէկը,
հարցրին մեզ «Ինչու հայեր չը կան այս երե-
կոյ, միթէ Աղաման ձեզ մօտ պատիւ չունէ»,
մենք ոչինչ չը կարողանալ պատասխանել:

Պէտք է լաւ հասկացած լինի օտար և մեծ քաղաքում ապրող ամեն մի հայը, որ նրա վարք ու բարքը օտար տեղում, նրա մարդկությունը... դառնում են հիմք դատողության օտարագրելի դէպի հայերս և ամբողջ ազգի յատկութիւններն են համարվում: Այսպիսի փափուկ դէպքերում, երբ ամբողջ ազգի պատիւ է չօջախվում, հայը պէտք է աշխատէ պաշտպանելու այդ պատիւը, թողնելով մի կողմ անձնատուութիւնները: Վերջացնում ենք մեր նկատողութիւնները տեղիս հայ ժողովրդի վերաբերեալ և յուսով ենք, որ ապագայում նա աւելի եռանդով և զգոյշ կը վերաբերվի այսպիսի դէպքերում:

Ուղարկում ենք ձեզ երեկոյթի պրօգրաման, պատկերը պ. Կուսիկեանի աշխատութիւնն է. յայտնում ենք նրան մեր շնորհակալութիւնը:

Ն. Ամատունի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Մօսկվա, 13 ապրիլի

Լրագրիւնեց արդէն յայտնի՝ հանդուցեալ Մկրտիչ Խմինի կտակի մասին մի քանի տեղից դիմել էին ինձ՝ խնդրելով մանրամասնութիւնները հաղորդել իրանց: Այս օրերս հաստատվելով կտակը օրինական կարգով՝ աւելորդ չեմ համարում նրա էական կէտերը ձեր պատուական թերթի միջոցով ծանուցանել կ զիտութիւն ընդհանրութեան:

1) Մկրտիչ Խմինի կտակի է տ ա ս ն հ ա ղ ա ր ռուբլի Լազարեան ձեռնարանին՝ պայմանով, որ դուռնորդ պահել պետական գանձարանում անձեռնմխելի, իսկ նրա տոկոսիւք դորձողով ընդհանրապէս հայ ազգագրութեան և մասնաւորապէս ժողովրդական գրականութեան վերաբերեալ նիւթերի հրատարակութեան համար: Այս կէտին յատկացեալ մանրամասնութիւնները մի առ մի որոշված են հանդուցեալի ձեռքով կադմած ծրագրում, որ մտնելու պէտք է ներկայացվի Բարձրագոյն հաստատութիւն և ապա կը հրատարակվի:

2) Մի դուռնորդ է, որ պէտք է գոյանայ բոլոր ծախսերը ծածկելուց յետոյ՝ իբրեւ մնացորդ, Խմինի թողել է Վենետիկի Միսիոնարական հայրերի վանքին՝ նոյնպիսի պայմանով, որ միայն տոկոսիւքով երբեմնապէս հրատարակվին ն ո ռ ա գ ի լ ա տ հայ պատմական երկեր, որպէս և բանահիւստութիւններ ժողովրդական գրականութեան վերաբերեալ բարեւ ընդարձակ առումը, այսինքն՝ նաև անվաներ գրութիւններ (այսօրիքի), զրոյց, աւանդութիւն, ժողովրդական երգեր և այլն:

3) Սրանցից զատ, կան և այլ դրամական վըձարումներ՝ կտակի համաձայն. իր թաղման և գերեզմանադաբի համար, իր մտերիմ ընկեր յայտնի դործի և բանասէր հանդուցեալ Գէորգ Հախումչեանի գերեզմանի վրա (Թիֆլիս) ծաղիկներ զննելու քանի տարի չարունակալ—200 ռուբլի. իր մօտ 35 տարե ծառայած աղային՝ օգտին և բ. ե. հ ա ղ ա ր ռուբլի:

4) Խմինի իր մատենադարանը, որ բաղկացած է աւելի քան 3,000 հատոր հայ, ռուս, ֆրանսերէն, անգլերէն, իտալերէն գրքերից, կտակել է Լազարեան ձեռնարանին:

5) Իր հին հայ գրագիրները և բոլոր գրագրութիւնները, նամակները և այլ ձեռագիր նիւթեր ու թղթերը թողել է իր աշակերտ Գ. խ. ին, այսինքն՝ նուազատիւ:

Պատեն ժամանակին աւելի մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդեմ Խմինից մնացած թղթերի մասին, որոնք կենսագրականից դատուեն նաև գրական հետաքրքրութիւն:

Գր. Խալաթեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս, 22-ին ապրիլի

«Արձագանք» 6 №-ում ևս կարդացի պ. Եւանդուկեանի նամակը, որ ամփոփում է իր մէջ անխաբիւր Բարեգործական ընկերութեան վերջին նիստին իմ արած նկատողութիւնները դէպի Ձը մտնելով մանրամասնութիւններ մէջ, որ մեզ շատ հեռու կը տանէր, ևս պարտք եմ համարում դէթ վերականգնել ասած խօսքիս յիշադրած միտքը: Երբ ընդհանուր ժողովի նախագահը յայտնեց ընկերութեան խորհրդի առաջարկութիւնը՝ Գէորգեան ձեռնարանի 3-րդ լսարանից դուրս եկած երկու ուսանողներին ուսում չարուեանելու միջոց տալու մասին, պ. Եւանդուկեան

բացատրեց ժողովին, որ ձեռնարանից արձակված ուսանողներին օգնելը կարող է վատ հետեւանքներ ունենալ ընկերութեան և հասարակութեան համար և աւելացրեց, թէ առաջ քան այդ քայլն անելը միանգամայն անհրաժեշտ է բանակցութիւն ունենալ ձեռնարանի վարչութեան հետ և տեղեկանալ նրանց մասին: Ահա այստեղ նկատելով, որ բոլորովին ուրիշ գոյնով են նկարագրում իրողութիւնը և ձեռնարկութիւնը չեն ուղում յարգել, յայտնեց ժողովականներին, որ վերոյիշեալ ուսանողները արձակված չեն Գէորգեան ձեռնարանից, այլ իրանց կազմով են դուրս գնացել ինչ ինչ պատճառներից ստիպված և թէ այդ երկու դադարները համաձայն չեն, որ կարելի լինէր մէկը միւսի տեղ ընդունել. ապա բացատրելով ժողովին, որ արձակված յանդուգն կամ ըմբոստ ուսանողը չէր կարող վարչութիւնից վաւերացրած վկայականով, որ նրանք ունեն, վարելով յոյժ գովելի լինել, աւելորդ համարեցի և տեղեկանալ նրանց վարքի մասին: Շարունակելով խօսքս միջոցների վերաբերութեամբ, ևս նկատեցի, որ թէպէտ անցեալ տարի ընդհանուր ժողովը վճռել էր մի որդեգիր պահել ձեռնարանում Բարեգործական ընկերութեան հաշուով, յատկացնելով այդ նպատակին 300 ռուբլի, բայց որովհետեւ այդ դուռնորդ դորձողութիւնը մի անակնկալ պատճառով պէտք է որ առժամանակ յետաձգվի, առաջարկեցի այդ 300 ռուբլին նուրբիւ վերոյիշեալ խնդրատու ուսանողներին, իբրեւ օժանդակել միջոց ուսում չարուեանելու և մասնացոյց արել, իբրեւ դրամական ուսանողներին ապագայ աջողութեան, նրանց ընդունակութիւնները և բարեմասնութիւնները վրա: Կարծեմ որ այդ դիտողութիւններից չէր կարելի պ. Եւանդուկեանի արած եղբարեակութեան դալ. իմ առածը խղճիս թելադրածն էր և ես ոչ մի «համաձայնութեան», կամ «հակակրօնութեան» հաշիւներ չունէի դէպի այս կամ այն անձը, ուստի ինչպէս նամակագրելը թիւր էր բացատրել Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան վերջին նիստին պատահած դէպքը: Հասարակական կիսանիւթերը վերջինը միշտ հարկաւոր է բարձրագործանի զննարանութեան երթարկել և ըստ աւանդութեան՝ միակողմանի որդեգրեալով չը բացատրել. կան դէպքեր, երբ պէտք է ունենալ լինել կեանքի պահանջներին և ըստ այնմ ընթացիկում, եթէ չենք կամենում մեր հասարակական հաստատութիւնների ապագան անյայտութեան մասնել և անտարբերութիւն գցել ժողովրդի մէջ դէպի իր նուիրական դործերը. Բարեգործական ընկերութիւնը, ինչպէս և ուրիշ մեր հաստատութիւնները, իրանց դործունէութեան մէջ պէտք է հետևեն վերոյիշեալ սկզբունքին. թող չը մոռանան մեր գործերը զեկալարեցելը, որ կեանքը չէ ձանադում statu quo-ով անխախտութիւնը և անխախտութիւնը. հետեւաբար այն, ինչ որ անցեալ տարի մէկտեղ էր ընկերութեան ընդհանուր ժողովում, կարող է այսօր, եթէ կարելի կայ, փոփոխութեան ենթարկվել նոյն ժողովի տրամադրութեամբ. այդպէս և պէտք է լինի:

Յովհ. Սոյեղիւթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐ

Վեհափառ Կաթողիկոսի մահից յետոյ Կաթողիկոսական տեղակալ նշանակված է Երեմիա արքեպիսկոպոսը:

Եթովպիայի վեհապետը, ինչպէս հաղորդում են տեղական լրագրիւնները, կնքված է ս. սինոդի անդամների և պրիմորթի ներկայութեամբ:

Թիֆլիսի, Բագուի, Գանձակի, Ալեքսանդրօպոլի և ուրիշ հայաբնակ տեղերի այլ և այլ հասարակական հաստատութիւններից պատգամաւորներ են ուղարկվել Եթովպիայի, վեհ. Կաթողիկոսի թաղմանը ներկայ գտնվելու համար: Երկրիս կառավարչապետը, Վրաստանի էկզարխը, Լեւոնադէ-մի, Կ. Պօլսի պատրիարքները, Պարսից արքային գործերի մինիստրը, այլ և այլ տեղերի թեմական առաջնորդներն ու զանազան բարձրաստիճան անձինք, վեհ. Կաթողիկոսի մահվան առթիվով հեռագրով իրանց ցաւակցութիւնն են արտայայտել Կաթողիկոսական տեղակալ Երեմիա արքեպիսկոպոսին:

«Տարազ» չաբաթաթերթից արտատպում ենք հետեւեալը. «Ապրիլի 14-ին կայացաւ Թիֆլիսի Առևտրական բանկի ընդհանուր ժողովը: Նիստին

ներկայ էին 85 ակցիօնէրներ, 138 ձայնով: Ընդհանուր ժողովին նախագահում էր Կ. Ալիխան-նեան: Բանկի շրջանառութիւնը անցեալ 1890 թ. եղել է 457,082,755 ռ. 76 կ., դուռն արդիւնքը 196,483 ռ. 76 կ. (100-ին 14% արդիւնք): Տարեկան հաշիւը միաձայն հաստատվեց և խորհրդի հերթով դուրս եկող անդամները՝ Կ. Ալիխանեան, Ա. Մանթաշեան, Կ. Մուրադեան, Ա. Գուրգենեան և Ե. Գաւիթով, կրկին վերընտրվեցան:

«Մշակի» № 40-ի մէջ դետեղված պ. Գր. Խալաթեանի նամակում մտել են հետեւեալ տպագրական սխալները. տպված է՝ «ընդհատելով իր եօթնամեայ լուսթիւնը», իսկ պէտք է լինէր՝ «իր եօթնամեայ լուսթիւնը». ապա տպված է՝ «լուսնի պէս պարզ է», իսկ պէտք է լինէր՝ «լուսնի պէս պարզ է»:

«Մշակի» 44-որդ համարում դետեղված Աղըս-տաֆայից գրված նամակի ստորագրութիւնը սխալմամբ տպված է՝ Խ. Չալեանց, այն ինչ պէտք է լինէր՝ Խ. Չալեանց:

«Новости» լրագիրը լսել է, որ ակցիօնէրական ընկերութիւնները և կառուածական բանկերը կանոնադրութիւնները վերադնեն իր և այդ տեսակ հաստատութիւնների գործունէութեան վրա ֆինանսական վերահսկողութիւն նշանակելու հարցը մշակելու համար կազմակերպվելու է մի առանձին կառավարչական յանձնաժողով, որին կը մասնակցեն ակցիօնէրական ընկերութիւնների և կառուածական բանկերի ներկայացուցիչները:

Երեւոյթարթի, 22-ին ապրիլի, վեհափառ Կաթողիկոսի թաղման օրը, Թիֆլիսի Վանքի մայրեկեղեցում, քաղաքային վարչութեան կարգադրութեամբ կէսօրին, հոգեհանգիստ կատարվեց հանդուցեալ Կաթողիկոսի յիշատակին: Այդ օրը ահապէս բազմութիւն կար թէ տաճարում և թէ տաճարի դաւթում: Ներկայ էին Թիֆլիսի քաղաքային պաշտօնակատարը և Կուսիկեանի ձայնաւորները, որոնց թւում և բաղմաթիւ վրացի ձայնաւորներ: Հոգեհանգիստից յետոյ առաջնորդարանի ղազխձում, խմբիկով առաջնորդ, վրաց կաթողիկոս արքային Բեսարիօն մի ճառ խօսեց ռուսերէն լեզուով, իր ցաւակցութիւնը յայտնելով հայոց եկեղեցու կրած կորուստի մասին և ցանկութիւն արտայայտելով, որ հայոց և վրաց եկեղեցիները միմեանց փոխադարձապէս միշտ համակերպ:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Կլրակի օրերին կըրպակները յայտնեց այլ ևս առաջվայ պէս չեն վակվում: Կրամական տաղանք և չափազանց մեծ ծախսերը այն դրութեան են հասցրել վաճառականներին, որ նրանք, եթէ հնար լինէր, պատրաստ կը լինէին նոյն իսկ գրիչները առևտուր անել մի քանի կօպէկ վաստակելու համար, ուր մնայ կիրակի օրերն առևտրից զրկվին»:

ԱՐԳԱՆՆԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Ապրիլի 11-ին, տեղիս վարդապետն ուսումնարանի ղազխձում տեղի ունեցաւ մանկական երեկոյթ, ուսումնարանի չքաւոր աշակերտների օգտին: Ձը նայելով որ մուտքի վճարը նշանակված էր շատ էժան, այն է 25 կօպէկ, դարձեալ ղազխձը համարեա կիսով չափ դատարկ էր: Երեկոյթը, որը կայացաւ պ. Մ. Տէր-Սիմօնեանցի նախաձեռնութեամբ, աչոյց անցաւ: Սկզբում երգեց ուսուցիչ Թ. Գաբրիէլեանի պատրաստած աշակերտների երգեցիկ խումբը և արտասանվեցան մի քանի բանաստեղծութիւններ, ապա ներկայացվեց մի մանկական խաղ, «Բաջ զինուորներ» անունով, իսկ վերջում զրկեցան հինգ հաս կենդանի պատկերներ թիւրքահայոց կեանքից: Երեկոյթի դուռն արդիւնք եղաւ 14 ռուբլի: Մի քանի անձինք աճեցրին դուռնար մասնաւոր նուիրատուութիւններով: Այդ գումարով գնվեցան զգեստներ 9 աշակերտներ և 2 աշակերտուհիների համար»:

Մեզ հաղորդում են ՇՈՒՇՈՅ հետեւեալը. «Ինչպէս յայտնի է, անցեալ տարվայ վերջերում մեր կողմերն երեցած մորեխը ձուեր էր դրել մեր դաշտերում. այդ ձուերը, որքան հնար եղաւ, ոչնչացրել էին մեր դիւղանքները: Սակայն այժմ համարեա թէ ամեն թէ մորեխը դուրս է եկել ձուերից: Տեղիս դաւառապետը, իր մարդկանցով դուրս է եկել դաշտերը, գիւղից ցիւղ անցնելով մորեխը կորուսելու դիմաւորութեամբ»:

Այս օրերս, ինչպէս մեզ գրում են Շուշուց, այդ քաղաքում, կարճ ժամանակամիջոցում վախճանվել են երկու կանայք, որոնք երկուսն էլ 100 տարեկան էին:

«Нов. Время» լրագիրը լսել է, ինչպէս հեռագրում է «Հիւսիսային գործակալութիւնը», որ պետական խորհուրդը որոշեց հիմնել տալ Կասպից ծովի կղզիների վրա գաղթականութիւններ տաժանակիր աշխատանքներին դատապարտված Կովկասի, Թուրքեստանի և Անդրկասպեան երկրի յանցաւորների համար, որոնք չեն դիմանում Սիբիրի և Սախալին կղզու կլիմային:

«Новости» լսում է, որ Ռիազան-Կոլոմիան երկաթուղու վարչութեանը թոյլատրված է կառուցանել երկաթուղու գիծ մինչև Ուրալսկ:

«Гражданинъ» լրագիրը հաղորդում է, որ բորայային նոր կանոնադրութիւնը մշակելու համար կը դուռնարին Ռուսաստանի զխաւոր առևտրական բաղաքների բորայային ներկայացուցիչները:

Ապրիլի 17-ին, ինչպէս հաղորդում է հեռագիրը, հասաւ Պետերբուրգ Չերնօբորայի իշխանը, իր դուստր, Մեծ Խախանովի Միլիցա Նիկոլայի հետ: Նրանց հետ եկաւ և մինիստր Բոժէշչար Պետրովիչ: Նախանիլ սահմանի վրա բարձր հիւրերին դիմաւորեց նախագահաւոր, իսկ Պետերբուրգի երկաթուղային կայարանում՝ Մեծ Խախան վաղիմիւր Ալեքսանդրովիչ, մի քանի ուրիշ բարձրագոյն անձանց հետ:

Այս օրերս լոյս տեսաւ ժողովրդական ընթերցանութեան համար էլի մի նոր գիրք, որի մէջ ամփոփված են երկու վկայիկներ, առաջինը՝ «Գիւղական աղբաւոր», Գիւղ-Սօպանայի, թարգմանութիւն օրիորդ Մալուխանի, և երկրորդը՝ «Գիւղական ջուրթակահար», ըստ Ալեքսանի, թարգմանութիւն օրիորդ Ս. Ն. Այդ վկայիկների մէջ արտայայտված են երկու, միմեանց բուրբուրն հակառակ երեկոյթներ: «Գիւղական աղբաւոր» մէջ լինք հասարակութիւնը դժբաղդացում է իր մի անդամին, նրան զարձնում է թշուառ, աղքատ, և ինքն այդ աղքատ անդամը իր կողմից հասարակութեանը բացի դժգոհութիւնից ուրիշ ոչինչ չէ պատճառում իսկ «Գիւղական ջուրթակահար» մէջ, ընդհակառակն, հասարակութիւնը հոգում է, խնամում է իր մի անդամին, մի ջուրթակահարին, և ինքն, այդ ջուրթակահարը իր կողմից՝ բոլոր իր ոյժերը և ունեցած չունեցածը նուիրում է հասարակութեան, և այդպիսով առաջ է գալիս մի ներդաշնակութիւն, փոխադարձ երջանիկ դրութիւն: Վկայիկները թարգմանութեան լեզուն կոչ է և մասշին:

Տեղական ուսու լրագիրները հաղորդել էին, որ իբր թէ անգլիական «Daily News» լրագիր թողթակից պ. Ֆիցլերադ ուղևորվել է Եթովպիայի վեհ. Կաթողիկոսի թաղմանը ներկայ լինելու համար: Մեզ տեղեկացնում են, որ պ. թողթակիցը ոչ թէ չէ ուղևորվել Եթովպիայի, այլ բուրբուրն Թիֆլիսից օտը դուրս էլ չէ դրել:

Մուրացկանների թիւը Թիֆլիսում օրից օր շատանում է: Չառլի տօներին եկեղեցիների դռներում և բազերում տասնեակներով աղքատներ էին խուսված, պատաւ կանայք, անդամաւորներ կոյրեր, փոքրիկ երեխաներ, զանազան երկրորդի հազուադէպով ժամաւորներին ձանապարհ չէին տալիս և աղերսելով օգնութիւն էին խնդրում: Ասենք թէ Չառլի տօներին, քրիստոնէական առատաձեռնութեան այդ օրերին՝ հարկաւոր մուրացկաններ կարող էին ապրել հարուստ սեղանների փառանքներով, բայց ինչ պէտք է լինի դրանց դրութիւնը տարվայ միւս օրերին, երբ այդ թշուառները մնկած ձեռքը միշտ դատարկ է մնում: Երբ պէտք է Թիֆլիսը մտածի մի աղքատանոց ունենալ...

ԹԻՖԼԻՍԻ Միլիցայի մահի փոխարին հասարակական այդիւնը՝ զարնան օրերի հետ միասին բաց աւրին իրանց դռները: Եւ ահա առաւօտից մինչև կէս փշիւր այդ այգիներում իրանց գրպանը և մարմինը մաշում են հաղաթաւոր մարդիկ, դաւտարկելով դիմու չիւրեր և զարեջրի տակաւնները: Աւելի ցաւալին այն է, որ այդ այգիները

10-50 (5)